

զեան իսկապէս գտել է մեղնից առաջ Ներս. ծածկագրերի բանալին, նա այդ չէր կարող «կամ» ով գտած լինել, այլ պէտք է ունենար ուրիշ յենակէտ կամ միջոց: Մեր վերծանած երկու օրինակ ծածկագրի մէջ կայ 573 բառ, բացի նախդիրներից, և այդքանի մէջ կայ յայն յայն «կամ», այն էլ բաղդի բերմունքով սխալ է գրուած—կափ փոխանակ կամի: (Ռէթէոսի նամակ, ներքեւից տող 10-րդ):

Այսչափով բաւականանալով, Պ. Զաքարեանցի և սոյն խընդրով հետաքրքրուող ընթերցողների լուրջ ուշադրութիւնն եմ հրաւիրում ասածներիս վրայ: Մեր բոլոր ասածը հիմնուում է մինչև այժմս յայտնի եղած փաստերի վրայ, իսկ թէ այսուհետև կարող են նոր փաստեր և դրական ապացոյցներ երևան գալ, մեր ասածը հերքող կամ հաստատող, այդ մասին երաշխաւոր չենք: Մենք վերջնական վճիռ չենք տալիս, և լաւ կլինէր որ վերջնական վճիռ կտրողները՝ իրանց ասածը դրական ապացոյցների վրայ հիմնէին:

ՄԻԱԲԱՆ

Մ Ի Լ Տ Ո Ն

ԵՒ ՆՈՐԱ

«ԿՈՐՈՒՍՏ ԴՐԱԽՏԻ»

(Ըստ Տէնի)

(Շրոմ-Կոմիտէ)

Այլ նորա մաքառութեան համար ստեղծեցին նորան: Եւ իրաւ, հէնց որ Միլտոնը Անգլիա վերադարձաւ՝ իսկոյն այդ մաքառութեան մէջ մտաւ դիւնուած՝ արամաբանութեամբ, կրթութեամբ և զայրացմամբ, ամրապատած՝ համոզման և խղճի զրահներով: «Հէնց որ թոյլ տրուեցաւ դէթ խօսքի ազատութիւն, ասում է նա, իսկոյն բոլորի բերանները բացուեցան եպիսկոպոսականութեան դէմ» . . . Թէպէտ այն ժամանակ զբաղուած էի այլ խընդիրների խորհրդածութիւններով, սակայն վճռեցի այս կողմը դարձնել մրաքիս բոլոր զօրութիւնն ու գործունէութիւնը . . . վասն զի ի մանկութենէ պատրաստուել էի տգէտ չմնալ նախ և առաջ աստուածային և մարդկային օրինաց խնդիրներում: Սորանից յետոյ իսկոյն գրեց (1641) Անգլիայի Նոր-Իրմիտիէ-ն Դոմին, ուր խորհրտաբար և արհամարհանք ծաղրում և հերքում

է եպիսկոպոսականութիւնը, Փոխադարձաբար ընդդիմախօսունթիւններ և յարձակումներ ծնանելով՝ նա կրկնապատկեց իւր խայթի թոյնը և վախճանական կերպով ոչնչացրեց նոցա՝ որոնց որ նախ վայր էր գլորել, Այս կատաղի կռուի մէջ՝ նա գնալով գնալով հասաւ աւելի բարձր և էլ չէր բաւականանում միայն եպիսկոպոսականութեան դէմ մաքառելով, այլ և թագաւորի դէմ գնաց, Անմիջապէս Կարողոս Ա ի մահից մի ամիս յետոյ՝ արդարացնում էր նոյն իսկ նորա մահապարտութիւնը, նա ի ցոյց էր հանում արքայապանութիւնը, յաղթական կառքի վերայ ամբառնալու գործ էր համարում, փառաց ճաճանչով էր լուսաւորում, նա պատմում էր դատաւորի ձայնով. «Թէ ինչպէս այս թագաւորը, կրօնի հալածողը, օրէնքների դրժողը՝ յետ երկար բռնաւորութեան՝ պարտութիւն ստացաւ իւր ժողովրդեան ձեռքի զէնքից, յետոյ դրուեցաւ բանալի, և որովհետեւ ոչ իւր վարմունքով, և ոչ խօսքով գրաւական չէր տալիս ապագայում իւր վարքը դէպի լաւը փոխելու, ուստի և պետութեան ծայրագոյն խորհրդով մահու դատապարտուեցաւ, վերջապէս—տապարով հարուածուեցաւ իւր պալատի առաջ և . . . ։ ։ ։ Եւ երբ որ իւր մոլեգնանք լեզուին այսքան ազատութիւն տուեց, ապա հանգստանում է և այսպէս է շարունակում. «Մարդկային կենաց ամենամեծ վերքերն են՝ բռնակալութիւնն ու անապաշտութիւնը, որոնք առաքելութեան ամենամեծ թշնամիներն են, Մարդկային ազգի մէջ Աստուած նախ ձեզ առաջնորդեց որ դոցանից ազատուէք . . . Այսպիսի փառաւոր գործից յետոյ, դուք չըպէտք է մտածէք և ոչ էլ գործէք ոչ մի ցած կամ անարգ բան, ոչինչ՝ որ վսեմ և վեհ բան չըլլինի, Այս փառքին հասնելու համար միակ գրաւականն այն կըլլինի, որ ինչպէս դուք կարողացաք պատերազմի մէջ թշնամուն յաղթել՝ այնպէս էլ ոչ նուազ կերպով կը կարողանաք նաև խաղաղութեան ժամանակ, ուրիշ մարդկանցից աւելի արիասրտութեամբ յաղթել անափառութեան, ժլատութեան, շռայլութեան, բոլոր արատներին, որոնք բռնափ ժամանակ ապականում են և լծի տակ են դնում մեզ մահկանացուներս,— և թէ ազատութիւնը պահպանելու համար՝ դուք այնքան չափաւոր, ժուժկալ և արդար կըլլինիք, որքան որ արիութիւն ցոյց տուիք՝ ստրկութեան լուծը բառնալու ժամանակ ։ Միլտոնը միշտ այսպէս է աւարտում իւր քննախօսութիւնները յաղթական երգով, Խիզախական և հրահանգուած փաստերի հաստատուն շարքերը, որ նա սովորութիւն ունէր շարադրութեան սկզբում պատերազմական կարգով դասաւորել, իսկոյն փոխաւում էին այն մասում, հէնց որ Միլտոնի սիրտը զգում էր ցնծական յաղթանակը, և այն ժամանակ նոքա տեղի էին տալիս փառաբանական օրհներգութեանց զարդարուն թափօրներին, նա ինքը սքանչանում էր դոցանից, անուրջներ էր զարդեցնում իւր սրտի մէջ, և այսպէս ապրում էր մենմենակ իւր վսեմական զգացմունքով միանգամայն իրրև քահանայապետ և զինուոր, որ ծանր զէնքերով և շքեղ զգեստներով միշտ պատրաստ կանգնած է ճշմարտութեան պահապան և օրհնաբան լինելու համար, Այսպիսի մարտութեան և իւր սրբազան կոչման մէջ խորասուզած, նա ապրում էր

արտաքոյ աշխարհի, նա չէր տեսնում շօշափելի իրողութիւնն, նա կոյր էր, ոչ մի փորձանքից չէր երկնչում, փորձի խրատներից և յանդիմանութիւններից վեր էր զգում իւր անձը, և ինչքան որ անընդունակ էր մարդկանց առաջնորդել՝ այնքան էլ և ինքը նոցա ենթարկուելու, նա մի մազի չափ չունի պետական մարդու կամ ճշգրտ քաղաքագիտի խոհականութիւնն ու զիջողականութիւնն, որ գիտէ կէս ճանապարհի վերայ յարմարապէս կանգ առնել, որ միշտ կշիռը պահելով՝ շօշափում, բախում, ընտրում է միայն հնարաւորն, և իւր տրամաբանութիւնը բանեցնում է միայն գործնական նըպատակների համար: Ո՛չ, Միլտոնը տեսական և մտածմանց մէջ ապրող մարդ է: Փակուած իւր դաղափարների մէջ՝ նա բացի նոցանից ուրիշ բան չէ տեսնում, նորա սիրահարն է, Երբ նա եպիսկոպոսների դէմ շարում է իւր փաստերն օւ տրտունջները, նա ծարաւում է, որ նոքա ոչնչանան իսպառ, արմատով, առանց մնացորդի: Հենց այս ըուպէիս, պահանջում է անյապաղ անմիջապէս հաստատել երիցական աստուածապաշտութիւնն, առանց նախապատրաստ հոգացողութեանց, առանց զգուշութեանց, ոչինչ չըխնայելով: Այս է, ասում է, Աստուծոյ պատուէրն, այս է ամենայն բարեպաշտ մարդու պարտականութիւնը: Աստուած կատակ չի վերցնիլ, վա՛յ նորան, ով որ դանդաղի հաւատոյ գործերի մէջ, նորա ասելով՝ նոր աստուածապաշտութեան անմիջական արդիւնքն անշուշտ կըլինի՝ սէր, միաբանութիւն, հեզութիւն, ազատութիւն, բարեպաշտութիւն, մի խօսքով՝ ամենայն առաքինութիւն: Թող թագաւորը չըկասկածէ, — նորա իշխանութիւնը աւելի հաստատուն կըլինի, Ժողովրդապետական քսան հազար համայնքներ պահպան կըկանգնեն թագաւորական իրաւանց շուրջ... Այս բոլոր դատողութիւնները ժպիտ են շարժում, նոցա մէջ պատկերանում է կուսակցութեան մարդն, որը նոյն իսկ վերահաստատութեան (րեփորմացիայի) ամենարեւոն և խառն ժամանակն, այսինքն երբ որ « ժողովրդեան ստուար մասը վերստին թագաւոր նստեցնելու ցանկութիւնից կատաղել էր », ճիշդ այդ ժամանակ ահա հրատարակում է « ազատ ռամկապետութիւն հիմնելու յարմար և պարտաստ հնար », և ընդարձակօրէն բացատրում է իւր ծրագիրը: Սորա մէջ երևում է տեսական մարդն, որ ուզենալով ապահարզանը արդարացնել՝ Ս. գրքի օգնութեան է դիմում, որ երազում է հասարակութեան քաղաքական կազմութիւնը փոփոխել՝ ըստ քմաց փոփոխելով վկայութեանց հասարակօրէն ըմբռնած իմաստը: Փակ աչքերով՝ բայց գրոց վկայութիւնները ձեռքին՝ նա աստիճաններով իջնում է եզրակացութիւններից այլ եղրակացութիւնները, տապալելով նախապաշարումները, հակումները, սովորութիւնները, մարդկային պէտքերը, կարծես թէ լոկ միայն դատողութիւններն ու կրօնական ոգին են կազմում մարդու ամբողջութիւնը, կարծես թէ ակներևութիւնը միշտ հաւատք է ծնանում, կարծես թէ հաւատքը անմիջապէս հանրօգուտ գործադրութիւն է ստանում, կարծես թէ կարծիքների մաքառման ժամանակ՝ ճշմարտութիւնն ու արդարութիւնը բաւական են, ու այս կամ այն վարդապետութիւնը յաղթութիւն ստանայ և նորա գերիշխա-

նութիւնը ճանաչուի:

Ի լրումն ամենայնի նա մի քննախօսութիւն ևս գրեց դաստիարակութեան մասին, ուր առաջարկում էր ուսուցանել աշակերտներին բոլոր գիտութիւնները, բոլոր արուեստներն և, այս ամենից հետաքրքրականն է, բոլոր առաքինութիւնները: «Ցաղանդաւոր և պերճախօս վարժապետը կը կարողանայ կարճ ժամանակում դարգացնել նոցա մէջ անհաւատալի արիութիւն և ջանասիրութիւն, նոցա մատաղ սրտերի մէջ բոլորքեւ աղնիւ և սաստիկ ջերմութիւն, որպէս զի նոցանից շատերը անշուշտ դառնան երեւելի մարդիկ՝ չունենալով իրանց հաւասարը»: Միլտօնը շատ տարիներ և շատ անգամ է ուսուցել, որպէս զի այսքան փորձերից յետոյ մօքի մէջ տեղի գտնին այդպիսի ցնորքներն՝ երեւի հարկաւոր է փորձի խրատներից բացէիբաց դարձնել երեսը հակառակ կողմն և աւելի բնածին հակում ունենալ միայն ուրուացնողների համար:

Սակայն հէնց այս աննահանջողութիւնը, այս անընկճելիութիւնն է կազմում Միլտօնի զօրութիւնն, և այն անսասան բնութիւնն՝ որ նորա մօքի մէջ դուռ չէր թողնում խրատներին մուտք տալու համար՝ նա էր ամբացնում նորա սիրտը զանազան թուլութիւնների դէմ: Միլտօնը բազմութիւնից շատ տարբեր մարդ է: Առ հասարակ մարդիկ քանի որ աւելի են ընդհարում կեանքի հետ՝ այնքան նոցա անձնապահութեան աղբիւրը սկսում է գամաքել, Աշխարհքի ծանօթութեան համն առնելու չափով՝ սակաւ առ սակաւ մարդ ընտելանում է նորա հետ և սկսում է նորա բըռնած շաւղով ընթանալ, այլ ևս չի կամենում յիմարի դեր խաղալ և ինքն իրան զսպել մի քանի այնպիսի համարձակութիւններից, որ ուրիշներն արդէն ներելի են համարում իրանց համար: Պատանկութեան ստոիկեան խստաբարոյութիւնն ազատուում է իւր սանձներից և մենք միայն ժպտում ենք՝ երբ որ յիշում ենք այդ խակ տղայութիւններն, ուր առաջուայ հաստատակամութիւնը աւելի արեան ջերմութեան ենք վերադրում: մարդ հերքում է նախկին սեպհական սկզբունքներն, այլ ևս չէ վերացնում իւր անձը փառաց պատուանդանի վերայ: Մեր հոգսը այն է միայն, որ հանգիստ ապրենք, անփոյթ թողնելով որ աշխարհն ինչպէս եկել է՝ այնպէս էլ գնայ, աշխատում ենք ամենայն հնարներով խուսափել ցնցումներից, և երբեմնապէս միայն քաղցրացնել մեր քաշկրտած կեանքը արժանագին զուարճութիւններով, Իսկ Միլտօնի վարած կեանքի մէջ այս ամեն բանի ստուերն անգամ չի նշմարւում: Մինչև վերջը նա բարոյապէս ողջ մնաց, չէր արտայայտում ոչ յուսահատութիւն, ոչ թուլութիւն, փորձը նորան ոչինչ չը սովորեցրեց, դժբախտութիւնները չընկճեցին. նա ամենայն բան տարաւ, և էլ երբեք չըղղջաց իւր արարքների վրայ, նա աչքի լոյսը կորցրեց, և ինքն էր մեղաւոր, որովհետև բժշկի հրամանի հակառակ՝ հիւանդութեան ժամանակ անդադար գրում էր՝ ժողովրդեան դուտը թշնամական ամբաստանութիւններից ազատ կացուցանելու համար: Նա կենդանի վկայ էր իւր ցնորած ուսմկապետութեան թաղման, իւր վարդապետութեանց առանց դա-

տասանի և քննութեան դատապարտութեան, իւր պատուի խղիւղեալ նշաւակութեան, նորա շուրջը լսւում էին ազատութիւնից գարշողների աղաղակներն և ստրկութեան ոգւոյ թնդիւնը: Ամբողջ ազգը մի անշնորհք նենգաւորի և երիտասարդ անառակի ոտքերի առաջ էր փռւում և նորա կոխած հողն էր լիզւում: Պուրիտանեան աղանդի վաստակաւոր առաջնորդները մահու դատապարտութեան, պատժութեան, տակաւին շունչը բերունում՝ կախաղանից հանուեցան և որովայնահերձ եղան, իսկ նոյն փորոտիքը նախատանօք ի ցոյց դրուեցան: Բայց ով որ դահճի ձեռքերից բնական մահով ազատուեցաւ՝ նա էլ գերեզմանի միջից հանուեցաւ, որպէս զի ժողովրդեան զուարճութեան համար կախաղանի վերայ կապուի: Արտասահման փախչողին նոյնպէս սպառնում և հալածում էր թագաւորական կուսակցի սուրբ: Իսկ շատերն, ամենից թշուառագոյնները, իրանց սուրբ և նուիրական դատը դրամով և տիտղոսներով վաճառեցին և առանց խղճալու բազմեցան իրանց նախկին բարեկամաց դահիճների խորհրդարանում: Անգլիայի ամենից աւելի բարեպաշտ և սրբութիւն սիրող քաղաքացիները բանտերումն էին հեծում կամ աղքատութեան մէջ մաշւում, իսկ մարմնացած արատաւորութիւնը գահի վերայ լրբութեամբ թաւաղւոր՝ իւր շուրջը հաւաքում էր ագահ և զեղխ խուժանին: Թէ Միլտոնի հոգու մեծ վերքերն այս ընդհանուր թշուառութեան ժամանակ ինչպէս թունաւորուեցան, ինքնին հասկանալի է: Նորա ստացուածքը, պատիւը, ազատութիւնը, շարագրութիւնները, ընտանեկան խաղաղութիւնն, ամենայն ինչ հալածուեցաւ այն ժամանակուայ մարդկանց ձեռքով, հաւատաքննութեան նման դրութիւնից և բնութեան մեծ հարուածից (Լոնդոնի հրդեհից): Բայց և այնպէս այսքան մասնաւոր և ընկերական թշուառութիւնների մէջ՝ Միլտոնը մնաց անխռով և անսասան: Ինչից որ ուրիշները սարսափած ուրանում էին՝ նա իրան պարծանք էր համարում: Ուր որ միւսներն ոգեսպառ էին լինում՝ նա աւելի արիանում էր: Ոչ մի բանի մէջ թուլանալ չէր ներում իրան, այլ աւելի դիմացկուն էր դառնում: «Բարեկամ, ես չեմ արտնջում երկնից դէմ, որ աչքերիս լոյսը կորուսի: Գէթ չեմ կորցրել արիութիւնս, ոչ էլ յոյսս, այլ համարձակ լողում եմ շեշտակի դէպի յառաջ, վասն զի կորուստս ազատութեան պաշտպանութեան համար եղաւ, մի ազնիւ գործի համար:»

Նա կենում էր կամ Լոնդոնի մի անշուք տան մէջ, կամ բուկինհեմի կոմսութեան գիւղում՝ դալարազարդ բլրի դիմաց, և հրատարակում էր Անգլիայի պատմութիւնը, Տրամբալանիւն, Ճշմարիտ իրմէ և հեքլոսմէ Դոմինիոնիւն, որոճում էր Գրեյտոնիւնիւն Դոմինիոնիւն: Ի՞նչ կարող է մարդուն այնպէս կազդուրել, առողջարար կացուցանել և մխիթարել, քան աշխատութիւնն, որը թեթեւութիւն է տալիս ոչ այնու միայն, որ վիշտն ամոքում է, այլ և այնու, որ մարդու հոգին պէտք է անշուշտ լարուի յայանի չափով և շարժէ նորա ճիգն ու ժրութիւնը: Ամենայն առաւօտ Միլտոնը

հրամայում էր իրա համար Ս. գրքից մի գլուխ կարգալ երբայրէն, ապա մի միջոց նստում էր լուռ, որպէս զի լրջութեամբ որոճայ ընթերցութեան իմաստները։ Ամենայն բանի մէջ անկախութեան ոգով տրամադրուած՝ նա անկարող էր կրօնական խնդիրներում ևս ուրիշի խելքով վարուել, ուստի նա գոհ էր իւր սրտի ներսը կանգնած տաճարով. ճշմարիտ եկեղեցու յատուկ նշաններն ոչ մէկ ազանդի մէջ չը տեսնելով՝ նա Աստուծոյ աղօթում էր առանձնացած։ Նորա ուսումնական զբաղումները շարունակուում էին մինչև կէսօր, այնուհետև մի ժամ հանգստանում էր՝ ֆիզիքական որ և է մարզութիւն անելով, ապա նուագում էր երգչոնի կամ վիօլօնչի վերայ։ Մի պահ յետոյ նորագում էր և շարունակում էր իւր զբաղումները մինչև վեց ժամը. երեկոներին զրոյց էր անում բարեկամների հետ։ Այցելողները Միլտօնին միշտ գտնում էին իւր սենեկի մէջ՝ այն կանաչ նախնատաւազ սրահակներով պատերի մէջ, բազկաթոռի վերայ նստած և խիստ մաքուր սևազգեստ հագին՝ ։ «Նորա զէմքը գունատ էր, սակայն ոչ մահատեսակ. ձեռք ու ոտքի յօգացաւ ունէր» ։ «բաց շագանակագոյն մազերը ճակատի մէջ տեղիցն էին բաժանւում և ինչնում էին գէմքի երկու կողմը երկայն խոպոպիքներով. մոխրագոյն, ջինջ աչերը կուրութեան արտաքին ոչ մի նշան չէին յայտնում» ։ Երիտասարդութեան ժամանակ Միլտօնը զարմանալի գեղեցիկ էր և նորատի օրիորդի քնքոյշ պատերի նման՝ նորա անգլիական պատերը գրեթէ մինչի մահը պահպանեցին իրանց կարմրութիւնը։ Բոլոր նորա շարժումները սիրայօժարութիւն էին արտայայտում. սիգաճեմ և արիական գնացքը նշան էր նորա վստահ և հաստատուն բնաւորութեան ։ Այսօր ևս նորա կենդանագիրները*) լաւ արտապայլում է նորա նախկին վեհապանծութիւնը, վսեմութիւնը, և արդարեւ քիչ են եղել մարդիկ, որ այդքան պատիւ բերէին մարդկութեան, Ահա այսպէս էր հանգչում և մարում այդ աղնուհոգու կեանքը, այսինքն—մայր մանող արեգակի պէս՝ պայծառ և անդորր։ Երկինքը պարգեւել էր այս բազմաչարճար մահկանացուին մի վսեմ և բարձրագեղ ուրախութիւն, արդարեւ արժանի՝ նորա ոգուն. այդ պուրիտանականի մէջ անդստին թագուցած բանաստեղծը վերստին ի յայտ եկաւ՝ մինչև այդ ժամանակ անծանօթ մեծութեամբ, որպէս զի քրիստոնէութեան շնորհէ երկրորդ Հոմերոս՝ քրիստոնէական Հոմերոս, նորա պատանեկութեան լուսաշաւիղ անձկութիւնները և հասուն տիոց յիշատակները զարթեցան և նորա հանճարի մէջ խմբուեցան կալուխական դաւանանքների և ս. Յովհաննու տեսիլքների շուրջը, որպէս զի միահամուռ ուժով ստեղծեն Զրիատուր շնորհաց և նշովից (Շնորհաբաշխութեան և Դատապարտութեան) դիւցազներգութիւնը, Բայց եթէ բանաստեղծի մարմնական աչքը անկարող էր մեր այս հողեղէն մթնոլորտի սահմանաւոր տեսարանները դիտել՝ իւր բանաստեղծական պատկերները

*) Հսկերէն Թարգմանութիւնների մէջ եւս կարելի է տեսնել նորա կենդանագրերը։

կազմելու համար՝ դորա փոխարէն նորա « մտաւոր աչքի » առաջ հրաշալի կերպով բացուեցան այնպիսի անծանօթ ուրորտներ և սփիւռներ, որ ոչ մի սոսկական մահականացու չի արժանացել տեսնելու։ Մարմնաւոր կոյրը իւր վերջին օրերում տեսաւ և նկարագրեց արարչութիւնից առաջ եղած տեսարանները, նախեղակ անեզրութիւնները, բարձրագաւառների մեծափառ անհունութիւնը, դժոխային դղեակի խաւար անդնդոց յանկարծակի փայլատակիլը ամպրոպային շանթերով, օրհնեալ երկնից սքանչելի հրաշագեղութիւնները, և այլն։

Ահա մի զարհուրելի մեծահաստոր՝ Միլտոնի « իմ » շարագրութեանց հաւաքածուն։ Աթոռները ճռճռում են այդ մատենի ծանրութիւնից. մի ժամ դորանով զբաղուելը բաւական է որ ձեռքերը կոտրատուին և իրրեւ օփիտ՝ գլխացաւ ևս վաստակուի։ Ինչպէս որ գիրքն է — այնպէս են և մարդիկ։ Նորա վերայ ձգած մի հայեացքը բաւական է, որ գաղափար ստանանք այն ժամանակուայ աստուածաբանների և մեկնիչների մասին, որոնց վիճելի խնդիրները ամփոփուած են նոյն մատենի մէջ։ Ակամայ յիշում ենք այն դարու աստուածաբանների պատկերները, ինչպէս որ մեզ փորագրած հասել են, — նոցա այն խիստ դժգոհներ՝ ակնապիշ հայեացքով և երկրաչափական ճակատով։ Բայց որքան տարբեր են դոցանից մեր ժամանակակից կերպարանքները՝ սոցա նուրբ և բարդ գծագրութիւնները՝ կարծես թէ իսկոյն պէտք է պլափոխուին և երերուին, եթէ մի աղօտ զգայութիւն կամ մի նոր գաղափար թեթեւ կերպով շօշափէ իրանց սիրտը։ Մի և նոյն ժամանակ եթէ մտաբերենք լատինական ծանրաբերձ կրթութիւնը, ֆիզիքական կոշտ մարդութիւնները, խիստ վաղբը, պլանդակ կարծիքները, բունի պատուաստած վարդապետութիւնները, որոնք ամենքը առաջուայ երիտասարդութեան զբաղեցնում, ճնշում, կարծրացնում, բրտացնում էին, — արդեօք այն տպաւորութիւնը չի՞ ազդուի մեր մէջ, ինչ որ մարդ ակամայ ստանում է, երբ որ զննում է Կիւլիէի վերաստեղծած մեգաթերիումների և մաստօդոնդների (մեծագաղանների և պոկաժանիների) կոպտաձև ոսկրակազմը։

Մարդկանց ցեղը փոխուել է։ Մեր միտքը այժմ ապշում է, երբ որ մտածում է նախկին մեծութեան և բարբարոսութեան մասին։ Բայց մենք հասկանում ենք, որ անցեալ բարբարոսութիւնը մեծութիւն էր ծնանում։ Մեր քաղաքակրթութեան բարձրութիւնից մենք այնպէս ենք նայում մեզանից շատ առաջ եպրոդ, հաւաքաբանութիւններով զրահաւորած, վկայութեանց անտառներով խոյացած, իրար ցեխ ու ապականութիւն թափող և իրար ոչնչացնող աստուածաբանների կուիւնների վերայ, ինչպէս որ նայում ենք յաղթամարմին հրէշների վերայ՝ որոնք ցլրհեղեղեան աղմի մէջ և մեծատերեւ վիթխարի պոկնիւնների տակ դանդաղ և յամրագարձ շարժւում էին և իրանց անճոռնի ժանիքներով իրարից պոկոտում էին մսի ահագին կտորներ։

Միլիտոնը կուռում էր առաջապահ կարգում. նա բարրարոսութեան և մեծութեան համար էր ծնուած թէ իւր բնութեամբ և թէ շրջապատող միջավայրով, և ընդունակ էր ժամանակակից տրամաբանութիւնը, ոճը և ոգին հանդէս հանել անպակաս կերպով և ամենաբարձր աստիճանով, Նորա ժամանակի մարդիկ արդէն սկսել էին կոկուել մեծ դաշխիճների մէջ մուտք գտած ակմբային կենցաղավարութեան ազդեցութիւններով, Բայց որպէս զի քաղաքավարութեան, պերճութեան, նուրբ և անմեղ կատակի ճաշակն առնուի, որպէս զի կըլծուի հաճոյանալու սիրայօժարութիւն, ձանձրացնելու երկիւղածութիւն, իմաստների կատարեալ պայծառութիւն, կանոնաւոր դասաւորութիւն, յաջող յաջորդաբանութեան և համբոյր զգուշաւորութեան արուեստ, որպէս զի սէր զգացուի բարեվայելուչ նմանեցումներ, չափաւոր աղատութիւն և ճոխ պէսպիսութիւն գործ դնելու,—մարդիկ պէտք է ունենային կանանց ընկերութիւն, լուրջ շահերի բացակայութիւն, պարապութիւն, սնապարծութիւն, անվտանգ և ապահով կեանք, Միլիտոնի մէջ մի փնտռէք այս բաներից ոչինչ, Միջնադարեան դպրոցականութիւնը դեռ չէ թաղուել. նա տակաւին ծանրանում է մինչև անգամ նորա հակառակորդների վերայ, որոնք աշխատում են նորա ականը փորել, Ամենայն վէճ ձեռնարկւում է իմաստականների տարազով և չափած քայլերով, Սովորութիւն էր դարձել ամեն բանից առաջ անձնական դրութիւնը յայտնի կացուցանել, ուստի Միլիտոնն էլ խոշոր տառերով գրում է Աղահալլէի հոգի փնտռելու վերնագրի ճակատին՝ այն խնդիրը, որ ուզում է պաշտպանել և ապացուցանել. «Իրար չհամակրող սրտերի և մտքերի վատ տրամադրութիւնը, տկարութիւնը կամ աննմանութիւնը,—որ հարկաւ ծագում է մի անդրամադրելի և բնական պատճառից, բայց և այնպէս խափանում է և հաւանականօրէն ընդ միշտ պէտք է խափանէ ամուսնական լծակցութիւնից անկալած բարեքները՝ այն է մխիթարութիւնը և խաղաղութիւնը,—աւելի ծանրակշիռ առիթ է ապահարզանի համար, քան արական բնածին խեղանդամութիւնը, աւելի մանաւանդ եթէ որ այդպէս խախուտ կերպով լծակցածները անդաւակ են և եթէ փոխադարձ համաձայնութեամբ են ուզում լուծել իրանց ամուսնական կապը», Այս մի կնիքն է, որը քակելու համար այնուհետև գալիս են լէգէոններ լէգէոններից ետև, այսինքն փաստերի մի ամբողջ հրահանգութեամբ բանակ, Նոքա վաշտ վաշտ առաջ են գալիս, իւրաքանչիւրը իւր թուահամարը կրելով իւր դրօշի վերայ, Նոքա շարւում են տասնեակներով մի մի վերնագրի ներքոյ և իւրաքանչիւրը իւր հրամանի տակ ստանում է ստորաբաժանմանց փոքրիկ ջոկատներ, Հարկաւ այստեղ մեծ դեր են կատարում Ս. գրոց վկայութիւնները, Նոքա չափում և կշռում են բառ բառից յետոյ, գոյականը ածականից յետոյ, նախադրութիւնը բայից յետոյ, հանդէս են գալիս մեծաքանակ մեկնութիւններ, հեղինակութիւններ, օրինակներ, որոնք առիթ են տալիս նոր նոր բաժանմունքներ անդաւար շարելու իրանց զատ զատ անջրպետներով, Բայց այսքան ճիգ թափելուց յետոյ՝ չի նշմարւում մի հիմնական կարգ. խճողած խնդիրը չի վերածւում մի լու-

սաբանող գաղափարի, նորա ընթացքը առաջուպ պէս մնում է ազօտ, չի որոշուում. ապացոյցները թէպէտ իրար վերայ են դիզուում, բայց մինը միւսից չի բղխում, և դուք ոչ թէ համոզուում՝ այլ աւելի խոնջութիւն էք զգում. Հեղինակը կարծես խօսում է Օքսֆորդի նախկին աշակերտների հետ, որոնք վարժուել են հանգիսական վիճաբանութիւններ վարելու, կարող են ամենամեծ ուշադրութեամբ ունկնդիր լինել և սովոր են մարտել անմարտելի գրքերի. Սոքա արդարեւ շատ ընտելացած են իրանց դպրոցական փշերով խեղդուած անտառակում. ինչ փոյթ, եթէ գլխապատառ միուին թփերի մէջ, աջ ու ձախ բախուին և ձանկուտուին. սոքա ժպտում են, երբ մենք ահ ու սարսափ կղզայինք, սոքա բնաւ գաղափար չունին այն առաջնորդող լուսի մասին, որ մեր ժամանակը պահանջում է ամենայն բանի մէջ:

Այսպիսի վիթխարի իմաստաններից ի՞նչ սրամտութիւն սպասենք, Սրամտութիւնը յաղթական բանականութեան անաշխատ և թեթեւ շարժմունքն է. Իսկ այստեղ ամենայն ինչ հսկայական է, ուստի և խիստ ծանրաբերձ. Երբ որ Միլտոնը հաճում է կատակ անել, նա նմանում է Կրօմուէլի սըւնաւորին, որ պատահմամբ մի պարահանդիսի մէջ մտնելով՝ հէնց առաջին քայլափոխում փուում է յատակի վերայ և իւր զէնքերի ծանրութեան պատճառով էլ չի կարողանում ոտքի ելլել. Աւելի բուրժ գրուածք, քան նորա Նիւտոնը-Լէւնէր հալոստիւրէն, դժուար թէ շատ գտնուի. Այդ Հակառակորդը հետեւեալ աստուածաբանական սրամտութեամբ էր կնքել իւր հերքումը. «Ահա տեսնում էք, եղբայր, դուք ամբողջ գլշեր ձուկ էիք որսում, սակայն—զուր եղաւ ձեր աշխատութիւնը և ոչինչ չըվաստակեցիք: Իսկ Միլտոնը գողողութեամբ պատասխանում է. «Եթէ մենք ոչինչ չենք վաստակում՝ Սիմէօն—առաքելի հետ ձկնորսելով, դուք ի՞նչ պէտք է որսաք Սիմէօն—մոգի հետ, որը ձեզ ժառանգութիւն է թողել իւր բոլոր կարթերը և ձկնորսական սարուածները: Նորա ժամանակակիցները ցնծալով վայրագ քրքիջ պայթեցուցին, որովհետեւ սքանչելի հարուած համարեցին այն ակնարկը, թէ հակառակորդը իւր բարձ ու պատիւը գնել է սիմոնականութեամբ. Ուրիշ անգամ Միլտոնը հերքում է իւր հակառակորդի մի երկսայրաբանութիւնը (որ Եղիշտի պատճառաբանութիւն ևս կոչուում է), և աւելացնում է. «Հիմա գնացէք և կարկառեցէք ձեր Աստուծան երկսայրաբանութեան եղջիրը: Ուսումնականները շատ յաջող համարեցին այս դիցաբանական համեմատութիւնը և ուրախ էին, որ հակառակորդը կոչուեցաւ՝ ցուլ, յաղթուած ցուլ, հեթանոսական ցուլ, Մի տեղ հակառակորդը ասում է. «Նղբարբ, դուք սխալ էք չափել բւեռի բարձրութիւնը, — Պէտք չէ զարմանալ, պատասխանում է Միլտոնը, երևի դեռ էլի շատերը սխալ կրճափեն ձեր բւեռի բարձրութիւնը, բայց աւելի ճշտութեամբ՝ ձեր բարձրութեան խոնարհութիւնը: Երբ որ հակառակորդը ողբում էր, թէ երբէք արեգակը աւելի սոսկալի ոճիր չէ լուսաւորել, քան արքայասպանութիւնը, Միլտոնը ճոռումաբանութեամբ խորհուրդ է տալիս

նորան մի անգամ էլ արիագակին նայել, բայց ոչ միայն այն մտքով, որ արեգակը լուսաւորէ Անգլիայի չարագործին (իմա՝ հակառակորդին), այլ որ գէթ փոքր ինչ ջերմացնէ այս վերջինի ցուրտ ոճը։ Այսպիսի տափակ բանախաղի ծանրաբերձութիւնը լաւ նշան է, թէ մտքերը գեռ շփոթուած են նորածին հմտութիւններով, նորակրօնութիւնը—սկիզբ է մտքի ազատութեան, բայց միայն՝ սկիզբ։ Բանաքննութիւնը տակաւին ծնունդ չէ առել։ Հեղինակութիւնը գեռ դարձեալ տիրում է հանճարնորի մտքին։ Միլտօնը կամենալով ապացուցանել արքայասպանութեան գաղափարը՝ յիշում է Օրէստին, Պուբլիկոյայի օրէնքները և ներոնի սպանութիւնը։ Նորա Անգլիայի պատմութիւնը լիքն է ամենայն տեսակ աւանդութեանց և առասպելների բանդադուշանքներով։ Ամեն առթից օգուտ է քաղում, որ Ս. Գրոց վկայութիւններով խօսէ։ Նա քաջութիւն է համարում և պարծենում է, թէ ինքը համարձակ քերական է և մեկնաբանութեան գիւցաղն։ Նա այնպէս կուրացած է բողոքականութեան համար, ինչպէս ուրիշները կաթոլիկութեան համար։ Մի խօսքով նա շղթայով է կաշկանդում բարձրագոյն բանականութիւնը՝ այն է սկզբնային սկզբունքը, և ազատութիւն է տալիս ստորակարգ բանականութեան՝ այն է վկայութեանց մեկնիչին։ Զբոհեղինակն ահագին կենդանիներու պէս՝ նա էլ կազմուած է անկատար կերպով։ Եւ գեռ ևս կիսով չափ մարդ՝ կիսով չափ վերան կպած տիղմ է։

Արդեօք այս տեղ քաղաքավարութիւն փնտռելք։ Անպաճոյճ և անաղարտ արժանաւորութիւնը հայհոյանքների դէմ հանդարտ հեգնութեամբ է պատասխանում և հարուածելով սխալ կարծիքը՝ խնայում է մարդուն։ Իսկ Միլտօնը իւր հակառակորդին շճմեցնում է կոպիտ ձևով և անխտիր ամենայն զէնքով։ «Դու, որ այնքան լեզունք գիտես, այնքան հատորներ կարդացել ես, այնքան թերթեր մրտաւել ես, այնուամենայնիւ, դու՝ էշ ես»։ Շատ յաջողակ համարելով այս վերադիրը՝ դարձեալ կրկնում և սրագործում է. «Ո՛վ էշերի ամենամեծը, դու քո մէջքիդ վերայ իբրեւ բռն կրում ես ամուսնուդ, քեզ շրջապատել ես քո ձեռքով ջարդած եպիսկոպոսներով, Յովհաննու յայտնութեան մեծ գաղանին ես նմանում . . . Գիտցիր, քեզ համար պատրաստուած է Յուդայի վախճանը. աւելի յուսահատութիւնից քան զղղանալուց դու ինքդ քեզ ասելի տեսնելով՝ մի օր կերթաս կախուելու, յետոյ քո երկուորեակիդ պէս՝ կըտրաքուիս փորիդ լայնութեամբ»։ Յիրաւի, երկու գոմէշների մօտնչ է այս, և ոչ թէ բանակոխ։

Եւ նորա կուում էին ճիշդ արիւնսխանձ գոմէշների պէս։ Միլտոնը ասել կարող էր սրտի ամենայն խորութիւնից, «նա զրջով կուում էր, ինչպէս Կրօմուէլի զինուորները (եթէ-էթէ կոչւէ)՝ սրով.—անյողդողդ, անգութ կատաղութեամբ, գաղանի յամառութեամբ, Այն ժամանակ զարթել էր ծանր բռնակալութեան դէմ ոխերիմ ծարաւը։ Ամենայն ոք յիշեց առաջուայ արսորները, ստացուածքի գրաւումը, մահապարտութիւնները, օրինաց զեղծումները, դաւադրութիւնները և ազատութեան հալածումը, քրիստոնէական խղճին պատուաստած կռապաշտութիւնը, Ամիրիկայի անսպասում

տարագրած կամ դաճին ու անարգութեան սիւնին զոհ դառած հաւատարմ քարոզիչներին: Այսպիսի յիշատակները անհաշտելի տեսլութիւն են ազգւում, և Միլտոնի շարադրութիւնները վկայում են մի այնպիսի կատաղութիւն, որի մասին մենք այժմ գաղափար չունինք, նա իւր նախատուածին հալածում է թափելով նախադասութիւն նախադասութիւնից յետոյ: Հալածում է մինչև Վերջը խիստ և կծու կերպով, և ոչ մի վայրկեան նորա նախատինքն չի թուլանում, ոչ մի բանում չի զիջանում, ոչ մի բարի գիտաւորութիւն կամ առաքինութիւն չի վերագրում հակառակորդին, ոչ արգարութեան արտաքին նմանութիւն անգամ, իսկ մի անգամ ընծա՞ծ ամբաստանական քաղափարից բնաւ չի խոտորում, կանգ չի առնում: Այս մի մենամարտութիւն է երես առ երես, ուր իւրաքանչիւր բառ հարուած է տալիս, մենամարտութիւն՝ յամառ, յարատեւ, անողորմ, դառնաշունչ, թշնամալից, ուր միայն մի հոգացողութիւն է երևում, որ վերքը խոր լինի և անվրէպ մահ տայ:

Այս ամեհի վայրագութիւնն և անբան բաջաղանքը արտայայտութիւն էր ներքին կենսական զօրութեան, որով լիքն էր մարտակիցների ձեռքերն ու կուրծքը: Թէպէտ մեր ժամանակուայ իմացական կարողութիւնը շատ աւելի խորաթափանց է, բայց դուրս փոխանակ՝ աւելի թոյլ է. համոզումները այնպէս ծայրայեղ չեն, բայց և այնպէս էլ ուժգին չեն: Մեր մտքի կենդրոնացումը ազատուելով միջնադարեան ծանր դպրոցականութիւնից և հեղինակութիւնից՝ աւելի դանդաղ է գործում: Մոլեռանդ հաւատքն ու սնապաշտութիւնը ներողամտութեամբ ամոքած և բարդ գաղափարների բաղմամբ և ազդեցութիւններով սանձած՝ ստեղծեցին ճշգրիտ և թեթեւ ոճ—խօսակցութեան և զուարճութեան գործիք, և արտաքսեցին բանաստեղծական մոլեռանդ ոճը—կուռելու և կատաղած եռանդի գործիքը: Եթէ մենք թողել ենք գաղանկութիւնն ու տխմարութիւնը, փոխարէն միւր մէջ պակասել է զօրութիւնն ու մեծութիւնը:

Միլտոնի զօրութիւնն ու մեծութիւնը անդադար ցայտում է նորա կործիքների և ոճի մէջ: Նորա խրոխտ իմացականութիւնը միշտ կարօտում և ձգտում էր արձակ շարժման, նա այդ պահանջում էր թէ մարդկութեան և թէ իւր անձի համար: Ոչ ոք այնքան չի սիրել, չի դրուատել, և ոչ ոք այնպէս գործով ցոյց չի տուել բանականութեան ազատական կոչումը, նա այդ հանգամանքից օգուտ էր քաղում մինչև յանդգնութեան, մինչև գայթակղութեան աստիճանը, նա վրդովում էր ամենայն կաշկանդների դէմ, «Եթէ ճշմարտութիւնը լոյս աշխարհ է գալիս, նորան միշտ ապօրինածին են հռչակում, իրր նախատինքն այն անձի համար, որ նորան ծնել է, մինչև որ ծամանակը,—ոչ թէ հայրը, այլ Գիտութեան մանկարարձը,—զաւակին հրատարակէ օրինածին և նորա գլխին ցանէ աղ և ջուր:», նա ոչ միայն դատապարտում էր գրականութեան վերայ այն ժամանակ ողողուած հայհոյութեանց և անէծքների հեղեղը, այլ խորհրդարանի դէմ գնաց և յարձակուեցաւ նորա մի հաստատութեան վերայ—Գրաքննութեան վերայ, նոյն հի-

մունքներով գրաւոր խօսքի աղատութիւն է պահանջում, ինչ հիմունքներով որ մտքի աղատութիւն քարոզեց, «Այսուհետեւ էլ ինչով գերադանց է հասուն մարդը դպրոցի աշակերտից, եթէ վարժապետի թաթից և փալախայից աղատուելուց յետոյ՝ մենք իսկոյն ենթարկուում ենք *imprimatur*-ի գաւազանին . . . Երբ որ մարդ գրում է յօգուտ հասարակութեան, նա ժողովում է իւր բոլոր միտքը և դատողութիւնը. նա հետախուզում է, որո՞ւնում է, կրկին վերաստուգում է, խորհրդակցում է ողջմիտ բարեկամների հետ: Ապա ամենայն խնամով ուսումնասիրում է իւր բնարանը, որպէս ղի աւելի ճոխ տեղեկութիւններ ունենայ, քան իրանից առաջ մատենագիրները. . . . Բայց արեւք բոլոր դռները, թող լոյսը խաւարին հալածէ. մի երկնէիք կարծիքների տարբերութիւններից . . . Արդեօք աւելի բան կարելի՞ է պահանջել այս ընդունակ ազգից, գիտութեան ծառաւի ժողովորդից: Ել ի՞նչ է պակաս այս արգաւանդ և այսպիսի սերմերով ուռճացած հողին, եթէ ոչ միայն իմաստուն և բարեպաշտ երկրագործներ, որ ստեղծեն լուսաւորեալ ազգ, իմաստունների, մարգարէների և մեծ մարդիկների ազգ. . . . Տեսնելով թէ ինչպէս ոտքի է կանգնում աշխիւ և կարող աղգը, ինձ այնպէս է թւում, իբր թէ մի զօրեղ մարդ քնից զարթել է և իւր յաղթ խաղաղիկները թափ է տալիս: Նա ինձ յիշեցնում է արծուին, որ սթափում և կրկին առնում է դիւցազնական կորովութիւնը, իւր մուսիած աչքերը վառում է արեգակի պայծառ անդրադարձութիւններով, կոպերից պոկում է ճպոտ քողը, իւր մոլեխ հայեացքը լուսնում է երկնային լուսոյ աղբիւրի մէջ. մինչդեռ երկչոտ և ճշող թռչնոց տարմը խաւարասէր կենդանեաց հետ ի միասին նորա շուրջը բոլորում են, տարակուսելով թէ արդեօք ի՞նչ է յղանում այդ դիւցազնին դիտաւորութիւնը, բայց և այնպէս իւրեանց նախանձոտ և խռպոտ կրկնումներով աշխատում են մարգարէանալ աղանդների և հերձուածների ծագումը: Այս ասում է Միլտոնը, չղգալով՝ որ նկարագրում է Միլտոնին:

Անկեղծ մատենագրի գրութեան ոճը ինքնին բղիւում է նորան ոգւորող ճշմարտութիւններից, նորա սիրած գաւառանքներին կերպարանք և ուղղութիւն տուող զգացմունքներն ու փափագները՝ նորա նախադասութիւններին ևս գրողը և գոյն են տալիս: Ամենայն հանձար երկու հետք է թողնում՝ նախ միտք, ապա և ձև: Մենք չենք հասկանայ Միլտոնի կարծիքները, եթէ ի կշիռ չառնենք նորա իրթին տրամաբանութեան և բոցավառ յափշտակութեան ոյժը, բայց նորա հանձարն էլ մի և նոյն հանգամանքներով է մեկնւում: Աղանդաւորն ու մատենագիրը մի և նոյն մարդու մէջ են ձուլուել, ուստի և մատենագրական տաղանդի մէջ կը գտնենք աղանդաւորի ընդունակութիւնները:

Երբ որ մի գաղափար արմատ է արձակում քաջ տրամաբան մտքի մէջ, նա սկսում է այն տեղ աճել և զարգանալ, բազմաթիւ կողմնակի լուսարանող գաղափարներ ընձիւղել, որոնք հիմնականի շուրջը խմբւում են, իրար

հետ միաբանած ծաւալում են և կարծես մացառ կամ անտառ են կազմում։ Միլտոնի նախադասութիւնները անծայր անվերջ ձիգ են. նա պէտք է ամբողջ երեսը պարբերութիւններով լցնէ, որպէս զի իւր հիմնական խորհրդեան շուրջ ահագին թուով խոնուած և մինը միւսից բղխած փաստերի և փոխաբերութիւնների բազմապատիկ հիւսուած շարքը՝ այն պարբերութիւնների մէջ ամփոփած զետեղէ։ Ստեղծողութեան այսպիսի մեծ երկունքի ժամանակ՝ նորա սիրտն ու երեակայութիւնը ահեղ սասանութեան մէջ է. դատելիս՝ Միլտոնը ցնծում է, ուստի և նախադասութիւնը յանկարծակի պայթեցնում է, որպէս մի ռումբ՝ որոյ ձգման ղյժը համեմատ է զանգուածի ծանրութեան, Հազիւ թէ կարելի է վստահանալ և թարգմանել ժամանակակից ընթերցողների համար այն տիտանական պարբերութիւնները, որով որ սկսւում է Միլտոնի փնտրումները նորա փնտրումներին հասնելու։ Մեր շունչը չի կարող այդքանը տանել. մեզ համար հասկանալի են միայն կարճ նախադասութիւններ. մեր ուշադրութիւնը այնքան տկար է, որ երկար չի դիմանայ և չի կենդանանայ մի կէտի վերայ՝ ամբողջ երեսի շարունակութեան տեղողութեամբ։ Մեզ հարկաւոր են ճկուն յարմարաձև գաղափարներ. մենք մեր նախահարց կոպիտ երկձեռանի թրերը դէն ձգեցինք, բաւական համարելով այժմեան թևթև և բարակ սրերը, Սակայն հազիւ թէ Վոլթերի կծու նախադասութիւնը աւելի մահաբեր լինի, քան այս տապարի կոշտ երկամէ բերանը. «Եթէ աւելի նուաստ և մեքենական արուեստների նկատմամբ անգամ՝ իրաւունք ենք համարում պնդել, թէ այն մարդը արժանի չէ օրինակելի վարպետ կամ կատարեալ արուեստագէտ կոչուելու, ով որ իւր ազնիւ հոգին բարձր չի դասում, քան սարկօրէն հոգացողութիւնը անարգ ռոճկի ու վարձառութեան մասին, — ո՞չ ապաքէն աւելի արդարաւոր հուլիսութեամբ կարող ենք ապաշնորհ և անարժան կոչել այնպիսի քահանային, որն ոչ միայն չի սոսկում նիւթական շահասիրութիւնից, այլ ընդհակառակ իւր աստուածաբանական հմտութիւնները չարաչար վատնում է և աղանդոյ պէս գործ է դնում մի անասնական և մուրացիկ յուսով, թէ վաղ կամ անագան սողալով և կեղեքելով անշուշտ կը հասնի լիապատար պաշտօնների և կը դառնայ վիճակաւոր առաջնորդ »։

Այսպէս ձիգ պարբերութիւններ պահանջող զօրաւոր տրամաբանութիւնը՝ միշտ զարդաւորում է պերճ և նկարագիր ոճով, Թող Շէքսպիրն ու ջղոտ բանաստեղծները մի հակիրճ խօսքով ամբողջ պատկեր ձևացնեն, թող նոքա տեղան նոր նոր փոխաբերութիւններ և մի դարձուածքի մէջ մի և նոյն գաղափարը երեւցնեն իրար փոխանակող հինգ վեց նորատեսիլներով. այսպիսի երանգների երփնաւորութիւնը, կայծերի պէծպէծ փայլատակումը՝ բացատրւում է նոցա թեւաւոր երեակայութեան բուռնեռանդ սլացումներով։ Իսկ աւելի կարգաբան, յաջորդող և իւր մտաց ընթացքը զսպող Միլտոնը՝ կծկի մի ծայրից բռնած թելերը քակում և լուծում է մինչև վերջին ծայրը, ուր միւսները մէջ տեղեկութեան են ընդհատում։ Նորա նկարացոյց մտքերից իւրաքանչիւրը արդէն ինքնին մի մի փոքրիկ քերթուածներ են, մի մի զու-

գակչիւ այլաբանութիւն, ուր որ իրար կցորդած բոլոր մասունքը պայծառ լոյս են սփռում. այն իշխող գաղափարի վերայ, որի զարդ կամ մկննդութիւն լինելու համար կոչուած են: Միլտոնը ընտրութեամբ է գործածում փոխաբերութիւնները. այդ զարդարանքները շոյալում է որպէս մի քահանայապետ, որ շքեղ փառաւորութեամբ պաշտօն մատուցանելով՝ գրաւում է աչքերը, որպէս զի սրտերը գրաւէ: Նա սնուած էր Սպէնսէրի, Շէքսպիրի, Բոմօնի, իւր բոլոր պանծալի նախորդների բանաստեղծութիւններով. նախնիքաց դարու ոսկեղէն հեղեղը, թէպէտ և նորա շուրջը արդէն ցամաքած՝ իւր վերջին յամրացուցած ընթացքով եկաւ յորդացաւ և լծացաւ նորա սրտի մէջ, Երբեմն նա այնպէս աղչու գեղեցիկ նախագասութիւններ է գործածում, որ մեղ յիշեցնում է Պլատոնի *Հիմնարկներ* առ ռե. «Զեմ սիրում ձգնաւորի մեռելական առաքինութիւնը, այն անփորձ, անսիրտ, անհոգի առաքինութիւնը, որը բնաւ չի վստահանում թագստեայ խոռոչից իւր գլուխը բարձրացնելու և ոսոխին երես առ երես համարձակ նայելու, այլ վատասրտութեամբ փախչում է այն փառաւոր ասպարիզից, ուր որ խիզախ ակոյեանները քրտինք թափելով և փոշու մէջ խեղդուելով մերցում են անմահութեան պսակը ստանալու համար»: Սակայն որքան որ նա իւր լեզուի ճոխութեամբ և ուժգնութեամբ պլատոնական է, իւր բոլոր միւս պարագաներով՝ լիովին Աերածնութեան մարդ է՝ խժրիժ իմաստուն և խստաշունչ բարոյախօս. նա չի դժուարանում պապի նշովքը նմանեցնել շան հաջին, իսկ մաքի երկունքը՝ ծննդաբեր Հերային: Բայց ինչ տեսակ էլ որ լինին այս պատկերացումները՝ արդեօք ուսումնական, անհամ, մտերմական թէ հոյակապ, — այնու ամենայնիւ նոքա միշտ զօրաւոր և ինքնարբերական են: Սաստիկ չափազանցութիւն ու կոպտարութիւնը միայն նշան են *Բեբել* — *Բեբել* բորբոքուած զօրութեան, որ Միլտոնի բնութեան հիմքն էր կազմում:

Այս հանգամանքից ինքնին ծագում է մոլեռանդութիւն, կրքի սաստկութիւն. յափշտակութիւնից և նկարագրութիւնից երեակայութիւնից ուրիշ բան չի կարող ծագել, Համարձակ խօսքը և ոճի ծայրայեղութիւնը դէպի մեզ է հասցնում այն մարդու բարձրադաշակ ձայնը, որ տանջւում, խորովում, վրդովում, ըղձանում է. «Գրքերը, ասում է նա իւր *Արեւոգիտ* մէջ, չեն բոլորովին մեռած իրեր...: Նոքա այնպէս շնչաւոր են և բեղմնաւոր զօրութիւն ունին, ինչպէս առասպելական վիշապի ատամները, որոնք ցանած տեղը զինած մարդիկ կարող էին բուսցնել, Մի լաւ գիրք սպանել մի և նոյն է թէ մարդ սպանել: Մարդասպանը սպանում է բանական էակին, Աստուծոյ պատկերն ու նմանութիւնը. հետեապէս լաւ գրքի ոչնչացնողը՝ սպանում է նոյն իսկ բանականութիւնը, սպանում է Աստուծոյ պատկերը տպագրութեան մէջ. Վան շատ մարդիկ, որոնք անօգուտ կերպով բռն են դաւնում երկրի համար, սակայն լաւ գիրքը՝ բարձրագահ մաքի կենսական արիւնն է, որ նորա սահմանաւոր կեանքը թողած՝ այժմ սրբութեամբ և զմուսած պահպանւում է որպէս անդին գանձ ընդհանուրի կենաց համար, որ և ան-

շուշտ անհամեմատ աւելի յարատե պիտի լինի... Հապա զգուշանանք և չը հալածենք ընդհանրութեան համար գործող կենսունակ մտաւոր աշխատութիւնը. չը վատենք անկաշառելի կիւնքը, որ գրքերի մէջ է հաւաքուած և պահուած, վասն զի այդպիսի բարբարոսական աւերուածը յայտնի մարդասպանութիւն է, երբեմն և մարտիրոսական մահածութիւն, իսկ եթէ դա ծանրանում է ամբողջ մամուլի վերայ, ապա ուրեմն՝ սպառնալու ջարդ ու կոտորածք է, որի վնասը չի վերջանայ միայն մի կեանք խափանելով, այլ արմատախիլ կանէ բովանդակ հոգեւոր գոյութիւնը, նոյն իսկ բանականութեան շունչը. հետեւապէս նա խլում է ոչ թէ կեանք՝ այլ անմահութիւն ։

Անօրինակ բարձր է այս եռանդը. մարդը արժանի է հանդիսանում գործի մեծութեան, և երբէք աւելի վսեմ պերճախօսութիւն չի պաշտպանել աւելի վսեմ ճշմարտութիւն. Մեծասաստ յանդիմանութիւններ թափւում են գրի հալածողների, մտքի մաքրութիւնը սրբապղծողների, աղատութեան սպանիչների վերայ. Ոչ նուազ խտրութեամբ պատուհասում է նաև մարմնապէս մտածողներին, որոնք առանց քննելու հաւատում են և իրանց հոգեւոր ստրկութիւնը անուանում են կրօն. նա իւր դառնաշունչ լեզուով և համարձակ նմանութիւններով Սուրիֆտին է յիշեցնում, բայց իւր երևակայութեան և հանճարեղութեան բարձրութեամբ անհամեմատ գերազանցում է սորան. Միամիտ հաւատացողը ոչ նուազ հերետիկոս է, եթէ նա միայն այն պատճառով է հաւատում, որ իւր հոգեւոր հովիւը այդպէս է հաստատում. Այս ճանապարհով ձեռք բերած նոյն իսկ ճշմարտութիւնն անգամ հերետիկոսութիւն է դառնում. Անձնական զուարճութիւնների և շահերի մասին մտածող հարուստը՝ այնքան դժուար բան է համարում կրօնը, այնքան խառնաշփոթ հաշիւների ենթակայ է համարում հաւատքը, որ չի իմանում թէ ինչպէս վստահանայ նորա համար վարկ բանալու իւր ելձմախ մատենի մէջ. Ել ի՞նչ է մնում նորան, եթէ ոչ փորձէ որ այդ աւելորդ բեռը թափ տայ իւր մէջ բից և որտեղից որ լինի մի քաջ գործակալ գտնէ կամ ստեղծէ, որպէս զի նորա ազդեցիկ հոգացողութեան յանձնարարէ իւր բոլոր կրօնական գործերը. Այդ գործակալը անշուշտ ընտրւում է յարգուած և հռչակուած հոգեւորականների կարգից, Եւ ահա դորա հետ մոխրամանում է նա, միայն դորա ձեռքն է տալիս իւր կրօնական ապրանքների շտեմարանը՝ իւր բոլոր բանալիներով և կողպէքներով. Պարզապէս ասենք, որ նա այդ մարդուց է շինում իւր կրօնը. Ուրեմն այսուհետև կրօնը չի դառնում մի անբաժան պարագայ նորա մէջ, այլ մի զատ և շարժուն երևոյթ՝ որ նորա շուրջ պտտւում է, երբեմն մերձենում երբեմն հեռանում է, նայելով թէ երբ կը բարեհաճի այն բարեսիրտ քահանան այցելել մեր բարեպաշտի տունը և թէ երբ փոխադարձաբար տօնտէրը ևս պատրաստ կըլինի քաղցրութեամբ ընդունելու այցելուին, ընծաներ տալու նորան, մեծարելու, կերակրելու, խմացնելու և տեղաւորելու իւր տան մէջ. Երեկոյնան ժամանակ ահա գալիս է նորա մօտ նորա կրօնը աղօթելու, կուշտ ընթրիք վայել-

լեւու, որ և ապա պատկուծ է փափուկ անկողնու մէջ, զարթնում է, քրէ լոյս է լսում: Մի բաժակիկ մալուսիայ կամ ուրիշ մշկահոտ զինի ըմպելով՝ նորա կրօնը աղէկ նախաճաշում է, ժամը ութին մեկնում է, իւր հիւրընկալ տանտիրոջ թողնում է մենակ խանութի մէջ՝ որ ամբողջ օրն իւր առուտուրը տեսնէ անարգել և առանց կրօնի: Միլտօնը առժամանակ կատակի և հանաքի է իջնում, բայց դուք տեսնում էք, թէ որքան թունալից հեգնութիւն կայ այդ հանաքի մէջ: Սակայն այդչափ թոյնն էլ քիչ է նորա համար: Ընթերցողը փշաքաղւում է, երբ որ Միլտօնը սովորական ոճով շարունակում է և լրջախօսութեամբ արձակ լուսանքներ է թափում, երբ որ մարմնասէր քրիստոնեայից յետոյ՝ մարմնասէր հոգևորականի օձիքից է բռնում, որ « ազահարար սուրբ հացը այնպէս է ծամում հաղորդութեան տաճարում, ինչպէս նշէ հաստեանները՝ հասարակաց ճաշարանում », նա ցնծում և թնդում է, երբ որ անկեղծ հաւատով սպառնում է, թէ այսպիսի պղծութիւնը երբ և իցէ իւր արժանաւոր հատուցումը կը ստանայ: Վալուինի խիստ վարդապետութիւնը վերանորոգեց նոյնքի և յաւիտենական դատապարտութեան դաւանութիւնը: Միլտօնը սպառնում է դժոխքով, արդարադատութեամբ և վրէժխնդրութեամբ, « Եւ դոքա յաւիտենա կը խորտակուին դժոխքի ամենախոր խորխորատը, կընկնեն ամենանախատական ստրկութեան մէջ, այսինքն բոլոր մեղաւորների ատելութեան զօհ կը դառնան և այդ անարժանների ոտքի տակ կը տրորուին, ուր այս վերջինները իրանց դժոխային տանջանքների մէջ միայն մի ուրախութիւն կը ճաշակեն, որ իշխանութիւն կունենան կատաղի կերպով բռնանալու դոցա վերայ. և դոքա այդ վիճակի մէջ կը մնան միշտ անարդուած, միշտ ատելի, ամենից աւելի խոր ընկած, ամենից աւելի լլկուած, քան յաւիտենական կորստեան միւս բոլոր սպասաւորները »: Այստեղ կատաղութիւնը աճում է մինչև ստեղծարանութիւն և Միքէլ Անջէլօի արձանները սորանից աւելի անողոր և ահեղ չեն արտայայտում իրանց թափած սաստերը:

Լրացնենք պատկերը. միացնենք, ինչպէս որ ինքը Միլտօնն է անում, երկնքի հեռուոր հրաշատեսութիւնները դժոխային խաւարի երևոյթների հետ—և պարսաւադրութիւնը օրհնեցութիւն կը դառնայ: « Երբ որ մտածում եմ, թէ որքան դաբեր նախապաշարման ընդարձակ և մնայլ սպասաւորութիւնը բոլոր աստղերը սրբում և աւելում էր եկեղեցու երկնակամարից, իսկ այժմ օրհնաբեր նորակրօնութիւնը փայլեց մեր գլխին և իւր ճառագայթներով ոլատառեց թերահաւատ տգիտութեան և բռնակալութեան գիշերային սև մթնութիւնը, ինձ այնպէս է թուում, թէ ամենի կրօնի մէջ անշուշտ պէտք է յորդահոսի վերին աստիճան կենդանարար բերկրութիւն, որ ճշմարիտ աւետարանի զեղումը շրջապատել է նորա հոգուն դրանտի բոլոր անուշահոտութիւններով »: Զարգերով չափադանցօրէն ծանրացած և խիստ երկար ձգձգած այս պարբերութիւնը՝ այնուամենայնիւ յիշեցնում է զուարթնոց — լեւ—լոյս ցնձական խմբերգութիւնը, որը կազմուած է սրտի խորութիւնից՝ հնչած ձայներից տասը հազար տաւիղների դաշնակցութեամբ:

Իւր ծանրատաղտուկ հաւաքաբանութիւններով Միլտոնը աղօթում է, բորբոքուած մարգարէից պատգամներով, ոգևորած աստուածաշնչեան յիշատակներով, սքանչացած յայտնութեան պայծառ նկարագիրներով, բայց այսքան յափշտակութեան մէջ հէնց սկզբից կարողանում է չափաւոր սահմանի մէջ մնալ՝ իւր գիտութեան և տրամաբանութեան ուժով. թէպէտ նա սաւառնում է ջինջ և երկնաբարձր օդի մէջ, բայց չի բարձրանում մինչև այն տոչորատապ վերնագաւառները, ուր որ ցնծութիւնից բանականութիւնը սկսում է հալուել. նա աղօթում է այնքան պանծալի պերճախօսութեամբ, հոգու այնպիսի վսեմութեամբ, որի հետ ոչինչ չի հաւասարուի, որ և պարզ ապացոյց է, թէ նա արդէն կոխել է իւր յատուկ ճանապարհը, այսինքն թէ այդ արձակաբանի միջից՝ արդէն արտափայլում է բանաստեղծը, « Ո՛վ, որ անհասանելի փառաց և ծագման մէջ ես բազմած, Հայր հրեշտակաց և մարդկան, և դու ամենակարող Թագաւոր, Փրկիչ այն մոլորեալ հօտի՝ որի բնութիւնը քեզ վերայ առար, դու՝ անասելի և անմահ Սէր, վերջապէս դու՝ աստուածային անհունութեան Երրորդ անձնաւորութիւն, լուսաւորիչ Հոգի՛, ամենայն էութեան ուրախութիւն և Մխիթարիչ, դարձրու հայեացքդ վերջին շնչին հասած թշուառ եկեղեցու վերայ, Ո՛հ, չը թողնես, որ կատարուին նոցա կորստաբեր խորհուրդները, թոյլ չը տաս, որ նոքա վերստին պատեն մեզ գոժոխային աղչամուղչի մնայլ ամպերով. . . . Ո՛վ մեղանից էլ չի նշմարում քեզ քո պայծառ ընթացքումդ, քո սրբութեան մէջ, ոսկէ աշտանակների միջև, որոնց փայլը այնքան երկար ժամանակ պաշտօնէից բռնութեամբ աղստանում էր մեր մէջ, որոնք աւելի աշտանակների ոսկուն ագահանալով՝ քան ճաճանչալից լոյսը սիրելով՝ յաջողեցան բուռն ձգել նոցա, Ե՛կ, յայտնուի՛ր, դու՝ որ եօթն աստղ ունիս աշոյղ մէջ. և հաստատիր ընտրեալ հովիւներիդ՝ իրանց աստիճանի և հին սովորութեանց համեմատ, որպէս զի նոքա կարողանան պաշտօն կատարիլ քո աչաց առաջ և բարեպաշտութեամբ կաթեցնել սրբազան իւղը քո սուրբ և անշէջ լապտերի մէջ. . . . Ո՛հ, լրացրու և կատարիր քո փառաւոր գործը, Ե՛լ քո արքայական ապարանքիցդ, ո՛վ Թագաւոր թագաւորաց, զգեստաւորուի՛ր քո արքայական վեհափառութեան երեւելի հանդերձներովդ, առ ձեռքիդ տիեզերական գայիսներ, որ քեզ յանձնել է Հայրդ, վասն զի քեզ այժմ կանչում է քո հարսը և նորոգութեան ծարաւ են բոլոր արարածները : Գոհութեան, փառաբանութեան և աղաչանաց այս աղօթքը այնպիսի ճոխ գեղեցկութիւններ է գեղում արձակ ոճով, որ հազիւ թէ մի բանաստեղծ կարողանայ մրցել այս արձակաբանի հետ :

Բայց միթէ սա իրաւ արձակաբան է, Ծանրաքայլ տրամախօսութիւնը, ոչ նուազ ծանր և անյաջող սրամտութիւնը, մոլի և արիւնխաւանձ կոպտութիւնը, վիպական վսեմութիւնը, կատարեալ և զարմանազեղ նկարատեսիլները, մձաական՝ անողորձ սաստկաշունչ կիրքը, կրօնական և քնարերգական բորբոքման սքանչելի բարձրութիւնը, — այս բոլոր հանգամանքները այն նշանները չեն, որով ճանաչուած է՝ մեկնելու համոզելու և ապացոյցանելու

Համար կոչուած մարդը, Դարու դարձողականութիւնը և կոպտութիւնը ժանգով ծանկեցին նորա տրամաբանութիւնը, երեւակայութիւնն ու յախշտակութիւնը, նորանմուտը ցրին փոխարեութեանց շախմատացութիւններով, Այսպիսի զեղծման կամ հրապարին ենթարկուած՝ նա չը կարողացաւ ոչ մի կատարելալ երկաւիրութիւն ստեղծել. նա կամ դրդուած գործնական հանգամանքի և անմիջական ատելութեան ազդեցութիւններով՝ գրեւէ միայն օգտաւէտ պարսաւագրեր, կամ ոգեւորուելով մեծ գաղափարի և հանճարեղութեան բողբոջական բորբոքմամբ՝ ստեղծել է լոկ հատուածոյ գեղեցկութիւններ, Բայց և այս ջիւղացան բեկորների մէջ մարդը երեւում է իւր բնական մեծութեամբ, Պարսաւագրի մէջ ևս արտայայտուում է կարգաբանութեան և քնարերգական ուղղութեան ոգին, ինչպէս որ յետոյ աւելի կատարելութեամբ երեւցաւ, վիպասանութեան մէջ. մի տեսարանի ամբողջական ազգմունքը խոր զգացմունքով կրելու և ամենայն մասերով միանուագ պայծառութեամբ ըմբռնելու կարողութիւնը՝ Միլտոնի այդ երկու մասանց մէջ ևս միակերպ արտայայտուում է, և դուք իսկոյն կը տեսնէք Կորնելիոս Դրոյի և Կորնելի մէջ այն, ինչ որ արդէն գտաք Նորմանդիայի Ժոհն Բեն-Ժոհնի և Հիւսթիւսի մէջ:

(Շարունակել): (Թարգ.) Ս. ՄԱՆԻՒՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Այս պարիլ ամսոյ 6-ին, Ս. Աստուածածնի Աւետման Նախընթաց օրը, Ս. Էջմիածնում սկսուեց Մայր Տաճարի վերանորոգութեան գործը՝ առաջնորդութեամբ ճարտարապետ Պ. Սալամբէկեանի և համեմատ նախագծի: Նոյն օրն սկսուեց նաև նոր Տպարանի հիմնարկութիւնը: Առաջիկայ համարում կաշխատենք տալ աւելի մանրամասն տեղեկութիւն:

Մայր Աթոռոյս տպարանում լոյս տեսաւ «Վիճակագրական տեղեկութիւնք եկեղեցական-ծխական ուսումնարանաց Հայոց, Վիճակացն Տփլիսոյ, Երևանայ, Աստրախանայ, Արցախոյ և Շամախոյ ոյ, հանդերձ պատճէնիւ Կոնդակի Վեհափառ Հայրուպետի ազգիս, ևս և այլ և այլ կտրգադրութիւնք արարեալք ի Նորին Սրբութենէ վասն բարեկարգութեան յիւտու ուսումնարանաց, 1886—1887 ուսումնական տարի»: Ձնայելով տպագրական մի քանի թերութեանց, այս գրքուկը շատ հետո-